ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունից հիսուն օր հետո, տեղի ունեցաւ մի մեծ հրաշք՝ Սուրբ Հոգին կրակե լեզվի կերպարապքով իջավ առաքեալների վրա: Այս տոնը հայտնի է մեզ Պենտեկոստե անունով, որ Հունարենին թարգմանաբար նշանակում է «հիսուներորդ օրը»: Քրիստոսի հարությունից հիսուն օր ետք տեղի ունեցաւ Սուրբ Հոգիի առաքեալներին վրա իջնելու կարեւոր իրադարձությունը:

Ս. Երրորդությունը ամբողջացնող շղթան է Սուրբ Հոգին եւ անբաժանելի մասը: Երբ Աստված ստեղծեց աշխարհը Ս. Հոգիի միջոցաւ կատարվեցին Տիրոջ հրահանքները: Մարիամ Աստվածածնի հղիացումը Գաբրիել հրեշտակապետի աւետիսով Սուրբ Հոգիի միջոցաւ կատարվեց: Քրիստոսի մկրտության ժամանակ Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ անոր վրա: Լիքն են այսպիսի օրինակներով Աստվածաշունչը ուր Սուրբ Հոգիի դերը անդըրժելի է եւ ակնհայտօրէն տեսանելի:

Քրիստոս իր հարությունից հետո աշակերտներին պատվիրեց չհեռանալ Երուսաղեմից մինչեւ Պենտեկոստեի տոնը: Նա խոստացել էի առաքյալներին Սուրբ Հոգին ուղարկելու մասին: Տոնին օրը առաքյալները հավաքվել էին նշելու համար հրյական Շաւուոթը (Պենտեկոստե) երբ երկնքիցն ուժեղ ձայն լսվեց եւ անոնց գլխավերեւում լեզուներ երեւացին կրակի ձեւով եւ նրանք սկսեցին տարբեր լեզուներով խօսել: Այս հրաշքի մասին կարդում ենք Նոր Կտակարանի, Գործք Առաքելոց գիրքի երկրորդ գլխի առաջի հատվածում:

Այս տարի Հոգեգալստյան տոնը Հայ Առաքելական եկեղեցում նշվում է Մայիս 28-ին: Հատուկ շարականներ եւ աղոթքներ են պատրաստվել այս տոնի հետ առընչված: Նրանցից ամենահայտնին «Առաքելոյ Աղաւնոյ» շարականն է որ գրվել է Մովսես Խորենացիի կողմից:

«Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն. Մինչդեռ նստէինք ի սուրբ վերնատանն:»

Թարգմանություն.
«Երկնառաքեալ Աղաւնին բարձրաձայն հնչմամբ իջաւ Աստուծմէ Փայլուն լոյսի նմանութեամբ, անսպառ կրակով զինեց աշակերտները. Երբ նստած էին սուրբ վերնատանը:»